Funded by the European Union

Երիտասարդների ներգրավում և հզորացում



Իրականացման ժամանակահատված: 01.04.2023 - 31.05.2026

ԱլԳ երկրներ:

Ադրբեջան, Բելառուս, Հայաստան, Մոլդովա, Ուկրաինա, Վրաստան

ԵՄ ներդրում: € 5 000 000

Ընդհանուր բյուջե: € 5 621 438

Իրականացնող կազմակերպություն(ներ):

GIZ

Նախագծի կայքէջ: euneighbourseast.eu/topics/youth/

Նախագծի նկարագրություն:

Երիտասարդությունը վճռորոշ դեր է խաղում ավելի ուժեղ, խաղաղ և ժողովրդավարական հասարակություններ կառուցելու գործում: Հաշվի առնելով երիտասարդների էական դերը որպես փոփոխության շարժիչ ուժ՝ նրանք անփոխարինելի ներդրում ունեն ԵՄ Արևելյան գործընկերության (ԱլԳ) երկրներում:

Երիտասարդների ներգրավումը և հզորացումը EU4Youth ծրագրի բաղադրիչ՝ EU4Youth IV-րդ փուլի, հիմնական ուղղվածությունն է:

Ծրագրի նպատակն է Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի երիտասարդներին ակտիվորեն ներգրավել քաղաքականության մշակման և որոշումների կայացման գործընթացներում: Այն առաջարկում է ուսուցման հնարավորություններ վեց երկրների երիտասարդության ոլորտի հիմնական մասնակիցներին: Բացի այդ, այն խթանում է համագործակցությունը, գիտելիքների փոխանակումը և համատեղ ուսուցումը ԱլԳ տարածաշրջանի պետական և ոչ պետական հաստատությունների և Եվրոպական միության նրանց գործընկերների միջև:

Ակնկալվող արդյունքներ:

1. ԱլԳ տարածաշրջանի երիտասարդական խորհուրդների և երիտասարդական կազմակերպությունների կարողությունների զարգացում:
2. Քաղաքականության մշակման գործընթացում երիտասարդների մասնակցության արդյունավետ փորձի կիրառում:
3. Երիտասարդական ծրագրերի նախագծման և իրականացման որակի ու արդյունավետության բարելավում և ազդեցիկ արդյունքների ձեռքբերում:
4. Երիտասարդական կազմակերպությունների կողմից փորձնական ծրագրերի իրականացում ԱլԳ տարածաշրջանի ենթազգային մակարդակում՝ կենտրոնանալով նորարարական փորձի վրա երեք ոլորտներում՝ կլիմայի փոփոխություն, ավելի քիչ հնարավորություններ ունեցող երիտասարդների ներգրավում, և թեմաներ, որոնք վերաբերում են յուրաքանչյուր երկրի կոնկրետ համատեքստին:
5. Ազգային և ԱլԳ մակարդակներում երիտասարդների միջև համագործակցության, գաղափարների փոխանակման և փոխադարձ ուսուցման խթանում: